




Չարմահալի «Գիւղնարգի» պարիզանակը:



Չարմահալի վերին-Քոնարք գիւղում հայ երիտասարդները «Գիւղնարգի» պարելիս:
(Արամ Երեմեանի գրական դիւանէն)

րադիոն Չարմահալի երեք հարեան ժողովուրդները - զաչէլի թօրերի, բախտիարցի լօտերի և հայ գեղջուկ ժողովրդի կենցաղի մի սիրուն էջն է և նրանց երաժշտական մշակութի պատմութեան մէջ առանձնապատուի տեղ է զբաղում: Ժողովրդական այդ եղանակը, որ վարեցի միջին հնչում է ներդաշնակ երանգաւորումներով, իր էական կառուցութեամբ թէ՛ զբաղէ է և թէ՛ տպաւորէ:

Այդ հնագոյն աւանդն այսօր հարստացնում է Չարմահալի դաւանի ժողովրդական երաժշտութեան ազգաբնական զանաւանը և կարող է նիւթ հանդիսանալ հայ երաժշտագէտների համար:

Ահա երաժշտական արուեստի այս անտիպ եղանակը, որ դեռևս ոչ ոքի կողմից չի ուսումնասիրուած, 1946 թուին Չարմահալի վերին-Քոնարք գիւղում նրա լագոյները գրի առնելով, առաջին անգամ, մրցման նկարի հետ, հրատարակում ենք «Բազմադեր»ում:

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ